խնդրէին Հայք, և նորա կատարեալ զխնդիր նորին յղեաց զայն 'ի ձեռն զինակրի միոյ իշխանին 'ի Յոպպէ. այլ նորա ոչ ինչ դիտացեալ զիրացն, եթող անդ զդրեանս՝ և դարձ արար յԵդիպտոս։

Իսկ Գրիգոր Պատրիարք՝ աւուրքք յառաջ դնացեալ էր յուխտ ընդ միաբանս իւր 'ի դերեզման Ս. Աստուածածնի յաւուր տօնի Ս. Ստեփաննոսի, և 'ի դարձի իւրում եդիտ զթղթաբերն ժամանեալ, և ընթերցաւ առաջի միաբանաց զթուղթս Պատրիարքին և դլխաւորաց ազգին, և ծանեան զհանդամանս իրաց՝ զաղմուկն և զխռովութիւնն Յունաց՝ զորս անցուցեալ էին 'ի թագաւորեալ քաղաքին. թէպէտ եւ լցան յայնժամ միաբանք տրտմութեամբ՝ այլ Գրիգոր քաջալերեալ խրախուսեաց զնոսա չվհատիլ իբրեւ վատասիրտ, այլ արիանալ և աչխատիլ խոհեմութեամբ և զգօնութեամբ, և մի երբէք հանել զբանն 'ի վեր՝ զի մի լուիցեն Յոյնք՝ և ճեղքեսցի քաղաքն, և լինիցին խոչ գործոյն՝ զի թէպէտ բարեկամք մեր են ասէ՝ այլ յայտնի է բնաւորութիւն նոցին. եթէ հնար լինի՝ դրամով վաճառեն զորդիս և զընտանիս իւրեանց։

Իսկ Յոյնք 'ի Կոստանդինուպօլիս եդին հարկս 'ի վերայ ժողովրդոց և կրօնակցաց իւրեանց, և ժողովեցին զայն բռնի մինչեւ 'ի յետին չքաւոր աղքատաց, 'ի պէտս ծախուց իւրեանց. նմին իրի ոչ իշխեցին խլրտիլ յԵրուսաղէմ 'ի խափանումն գործոյն, և հայեցեալ յայնչափ ծախս դրամոց՝ տակաւին ոչ դիտէին թէ 'ի յաջողութեա՞ն իցեն՝ և թէ 'ի ձախողութեան, անտեղեակ էին և 'ի դալստենէ զինակրին, մինչեւ եկին դրեանք նոցին, յորոց ծանեան զամենայն հանդամանս գործոյն՝ զի և նոքա խնդրեալ էին հանրագրութիւն յԵրուսաղէմէ, սակայն կարի անագան ժամանեցին դրեանք նոցին փայիկաւ։

Այլ յորժամ լու եղեւ 'ի քաղաքին թէ Հայք պատրաստեցին զկարեւոր դրեանս՝ բորբոքեցաւ Թարգմանն Յունաց Կեսարիոս, և դիմեաց զայրագին առ դատաւորն, և աղաղակ բարձեալ գոչէր, թէ ընդէ՞ր ետուր դիր Հայոց. բայց դատաւորն արբոյց նմա զբաժակն դառնութեան, զի ես ասէ ըստ մտաց հին հրովարտակաց նոցին ետու զդիրն, մի՞թէ սաեցի ինչ, եւ կշտամբեալ զնա եհան արտաքս։